ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ <<Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 5 մսուր- մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հոգեբանի, դաստիարակի, ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի և պարուսույցի թափուր պաշտոնների համար

Տիպ՝ Նախադպրոցական ուսումնական հաստատություններում թափուր պաշտոններ
Հայտատու՝ Արտաշատի համայնքապետարան
ՀՀ ԿԳՄՍ նախարարի 17 փետրվարի 2022 թվականի N 08-Ն հրաման

ՀՀ Արարատի մարզի Արտաշատի համայնքապետարանը հայտարարում է մրցույթ <<Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 5 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի հոգեբանի /1 դրույքաչափով/, ֆիզիկական կուլտուրայի հրահանգչի /0,75 դրույքաչափով/, պարուսույցի /0,75 դրույքաչափով/ և դաստիարակի /0,625 դրույքաչափով/ թափուր հաստիքների համար

Մրցույթին մասնակցելու համար անձը տնօրենին կամ տնօրենի կողմից նշանակված պատասխանատու աշխատակցին է ներկայացնում

1) դիմում (Ձև 1).
2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).
3) անձը հաստատող փաստաթուղթ.
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).
5) ինքնակենսագրություն (Ձև 4).
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Մրցույթը անցկացվում է երկու փուլով՝

1. թեստավորում
2. հարցազրույց

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնել անձամբ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 09:00-17:00 բացի շաբաթ, կիրակի և տոնական օրերից:

Դիմումների ընդունման ժամկետն է 09.01.2023թ. - 03.02.2023թ. ներառյալ:

Մրցույթը տեղի կունենա 06.02.2022թ.-ին ժամը 11 :00-ին
ՀՀ Արարատի մարզի <<Արտաշատ համայնքի Արտաշատ քաղաքի թիվ 5 մսուր-մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ում:

Հեռ. 093-19-06-04

Հասցե՝ Արարատի մարզ, Արտաշատ համայնք, ք. Արտաշատ, Շիրվանզադե փողոց 17/1
Հեռ.՝ 093-19-06-04
Էլ. փոստ՝ mankapartezn5@mail.ru